ՍԴ/0009/11/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Նախագահող դատավոր՝ Ն.Հովակիմյան

30 հունիսի 2023 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 30-ի որոշման դեմ դիմող Անդրանիկ Գևորգյանի ներկայացուցիչ Մ.Վարդանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2020 թվականի ապրիլի 9-ին ՀՀ ոստիկանության Կապանի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքում Անդրանիկ Գևորգյանի հաղորդման

առթիվ նախապատրաստված նյութերով 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 137-րդ հոդվածի 1-ին մասի և 177-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 41155020 քրեական գործը: 2020 թվականի ապրիլի 10-ին քրեական գործը վարույթ է ընդունվել ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում:

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ն.Աբգարյանի՝ 2021 թվականի մարտի 31-ի որոշմամբ թիվ 41155020 քրեական գործի վարույթը կարճվել է՝ Ջինավարդ Գրիգորյանի, Արարատ Խաչատրյանի, Սուրեն Աղագյուլյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով և 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմերի բացակայության հիմքով: Նույն որոշմամբ Ջ.Գրիգորյանի, Ա.Խաչատրյանի, Ս.Աղագյուլյանի և Անդրանիկ Գևորգյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրանց արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասով, 185-րդ հոդվածի 1-ին մասով և 186-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմերի բացակայության հիմքով, Անդրանիկ Գևորգյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրա արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով, Արամ Գևորգյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրա արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով:

Սյունիքի մարզի դատախազ Է.Հարությունյանի՝ 2021 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ Անդրանիկ Գևորգյանի ներկայացուցիչ Մ.Վարդանյանի բողոքը՝ քննիչ Ն.Աբգարյանի 2021 թվականի մարտի 31-ի որոշման դեմ, մերժվել է:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2021 թվականի մայիսի 31-ի որոշմամբ դիմող Անդրանիկ Գևորգյանի ներկայացուցիչ Մ.Վարդանյանի բողոքը՝ իրավունքների և ազատությունների խախտումը վարույթն իրականացնող մարմնի կողմից վերացնելու պարտականությունը ճանաչելու վերաբերյալ, մերժել է:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի հունիսի 24-ի որոշմամբ դիմող Ա.Գևորգյանի և ներկայացուցիչ Մ.Վարդանյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ ներկայացուցիչ Մ.Վարդանյանի միջնորդությունը՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մայիսի 31-ի որոշման բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, բավարարվել է:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ դիմող Ա.Գևորգյանի և ներկայացուցիչ Մ.Վարդանյանի վերաքննիչ բողոքները՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ, թողնվել են առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 30-ի որոշման դեմ դիմող Ա.Գևորգյանի ներկայացուցիչ Մ.Վարդանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ վարույթ է ընդունվել[1]: Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի հունիսի 21-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական իրավունքի էական խախտում:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 6-ի որոշման օրինական ուժ ստանալու պահ է համարել 2021 թվականի հուլիսի 6-ը, ոչ թե հուլիսի 17-ը: Մինչդեռ, գործն ըստ էության չլուծող դատական ակտերը ենթակա են բողոքարկման 10-օրյա ժամկետում, հետևաբար անհրաժեշտ էր սպասել, որպեսզի դատական ակտն օրինական ուժ ստանար

[1] Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

հրապարակման պահից 10-օրյա ժամկետում՝ համընթաց բացառելով մյուս կողմի բողոքարկման իրավունքը:

7. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 30-ի որոշումը վերացնել և կայացնել նոր դատական ակտ:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

8. Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 6-ի որոշման եզրափակիչ մասում արձանագրվել է. *«Փաստաբան Մուշեղ Վարդանյանի միջնորդությունը՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ՍԴ/0009/11/21 բողոքով 2021 թվականի մայիսի 31-ի որոշման բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, բավարարել:*

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ տասնօրյա ժամկետում՝ սույն որոշումը ստանալու պահից»[2]:

9. Ներկայացուցիչ Մ.Վարդանյանի վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել 2021 թվականի հուլիսի 19-ին[3], իսկ դիմող Ա.Գևորգյանի վերաքննիչ բողոքը՝ 2021 թվականի հուլիսի 20-ին[4]:

10. Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 30-ի որոշման համաձայն՝ *«(…) Առաջին ատյանի դատարանի 31.05.2021թ. թիվ ՍԴ/0009/11/20 որոշման բողոքարկման ժամկետը դիմող Ա.Գևորգյանի և դիմողի ներկայացուցիչ Մ.Վարդանյանի համար սկսվել է Առաջին ատյանի դատարանի կողմից վերաքննիչ բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին որոշման կայացման օրվա՝ 06.07.2021թ. գիշերվա զրո ժամից և ավարտվել է 16.07.2021թ. ժամը 24:00-ին, մինչդեռ դիմողը վերաքննիչ բողոքը ներկայացրել է 20.07.2021թ., իսկ դիմողի ներկայացուցիչը՝ 19.07.2021թ.՝ բողոքարկման ժամկետը լրանալուց հետո:*

---

[2] Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 121, ընդգծումն Վճռաբեկ դատարանինն է:
[3] Տե՛ս, նյութեր, հատոր 2, թերթ 122:
[4] Տե՛ս, նյութեր, հատոր 2, թերթ 134:

Բողոքաբերի և վերջինիս ներկայացուցչի փաստարկն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանի 06.07.2021թ. որոշումը՝ վերաքննիչ բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, օրինական ուժ է ստացել 17.07.2021թ-ից, հիմնավոր չէ, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380 հոդվածի մեկնաբանությունից հետևում է, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա է բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը, իսկ այդ միջնորդությունը բավարարելու մասին որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէ: Հետևաբար Առաջին ատյանի դատարանի 06.07.2021թ. որոշումը՝ վերաքննիչ բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, օրինական ուժի մեջ է մտել հրապարակման պահից՝ 06.07.2021թ., ոչ թե 17.07.2021թ.:

Ամփոփելով՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 31.05.2021թ. թիվ ՍԴ/0009/11/21 որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքները պետք է թողնել առանց քննության՝ ժամկետանց լինելու հիմքով (...)»[5]*:*

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

11. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ է արդյոք Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 30-ի որոշումը՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ դիմող Ա.Գևորգյանի և ներկայացուցիչ Մ.Վարդանյանի վերաքննիչ բողոքներն առանց քննության թողնելու վերաբերյալ:

12. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք) 380-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատական ակտը կայացրած դատարանի առաջ միջնորդել՝*

[5] Տե՛ս, նյութեր, հատոր 2, թերթեր 137-139:

վերականգնելու բաց թողնված ժամկետը: Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը քննվում է դատական նիստում դատավճիռ կամ որոշում կայացրած դատարանի կողմից, որն իրավունք ունի կանչել միջնորդություն հարուցած անձին՝ բացատրություններ տալու համար:

2. Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու որոշումը տասնհինգօրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան, որն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը և քննել գործը՝ պահպանելով սույն օրենսգրքի 382 հոդվածում և 383 հոդվածի երկրորդ մասում շարադրված պահանջները: Վերաքննիչ դատարանը բողոք ներկայացրած անձի միջնորդության հիման վրա բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով համարում է հարգելի, եթե բողոք ներկայացրած անձը հիմնավորում է, որ դատական ակտն ստանալու պահից չեն լրացել բողոքարկման ժամկետները (...)»:

12.1. Վերոնշյալ դրույթի առնչությամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ հիշյալ իրավակարգավորման իմաստով՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա է միայն բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը, իսկ միջնորդությունը բավարարելու մասին որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէ[6]:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, *«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի* վերաբերյալ որոշմամբ, անդրադառնալով քրեական գործի շրջանակներում կայացված որոշումների բողոքարկման բաց թողնված ժամկետը իրավունքի ուժով հարգելի համարելու դեպքերին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) [Դ]ատավարության մարմնի կողմից ինչպես իր կայացրած որոշման բողոքարկման ընթացակարգի մասին պարզաբանումներ ընդհանրապես չտրամադրելը, այնպես էլ* ***ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգավորումներին չհամապատասխանող, ոչ ամբողջական, անորոշ և դատավարության մասնակիցներին մոլորության մեջ գցող պարզաբանումներ տրամադրելը հավասարապես հակասում են օրինականության սկզբունքին և հանգեցնում անձանց իրավական պաշտպանության արդյունավետ***

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արման Հովսեփյանի* գործով 2023 թվականի փետրվարի 15-ի թիվ ՏԴ1/0028/01/17 որոշման 21-րդ կետը:

միջոցի իրավունքի խախտման: *(…) Այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմնի դրսևորած անբարեխղճության հետևանքով համապատասխան որոշումը բողոքարկելու կարգի թույլ տրված խախտումը հնարավոր է վերացնել դատական վարույթում (օրինակ՝ բաց է թողնվել բողոքարկման ժամկետը), դատարանը պետք է իրավունքի ուժով (ex jure) հարգելի համարի այդ խախտումը և բողոքը քննարկի ըստ էության (…)»*[7]:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը 2021 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ ներկայացուցիչ Մ.Վարդանյանի միջնորդությունը՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մայիսի 31-ի որոշման բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, բավարարել է՝ որոշման եզրափակիչ մասում արձանագրելով, որ որոշումը կարող է բողոքարկվել Վերաքննիչ դատարան՝ տասնօրյա ժամկետում՝ այն ստանալու պահից[8]:

- Վերաքննիչ դատարանը 2021 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ դիմող Ա.Գևորգյանի և ներկայացուցիչ Մ.Վարդանյանի վերաքննիչ բողոքները՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ, թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մայիսի 31-ի որոշման բողոքարկման ժամկետը դիմող Ա.Գևորգյանի և դիմողի ներկայացուցիչ Մ.Վարդանյանի համար սկսվել է Առաջին ատյանի դատարանի կողմից վերաքննիչ բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին որոշման կայացման օրվա՝ 2021 թվականի հուլիսի 6-ի գիշերվա զրո ժամից և ավարտվել է 2021 թվականի հուլիսի 16-ին ժամը 24:00-ին, մինչդեռ դիմողը վերաքննիչ բողոքը ներկայացրել է 2021 թվականի հուլիսի 20-ին, իսկ դիմողի ներկայացուցիչը՝ 2021 թվականի հուլիսի 19-ին՝ բողոքարկման ժամկետը լրանալուց հետո:

Բողոքաբերի և վերջինիս ներկայացուցչի փաստարկն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 6-ի որոշումը՝ վերաքննիչ

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի* գործով 2014 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԳԴ3/0001/11/14 որոշման 15-րդ կետը:

[8] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

բողոքարկման բաց թողնված ժամկետ վերականգնելու մասին, օրինական ուժ է ստացել 2021 թվականի հուլիսի 17-ին, Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի համարել այն պատճառաբանությամբ, որ բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը բավարարելու մասին որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէ: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 6-ի որոշումը՝ վերաքննիչ բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, օրինական ուժի մեջ է մտել հրապարակման պահից՝ 2021 թվականի հուլիսի 6-ին, ոչ թե հուլիսի 17-ին[9]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-12.1-րդ կետերում վկայակոչված իրավակարգավորման և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը բավարարելու մասին որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէ, սակայն Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 6-ի որոշման եզրափակիչ մասում տեղ գտած ձևակերպումը՝ դատական ակտի վերաքննության կարգով բողոքարկման ենթակա լինելու վերաբերյալ, կարող էր վարույթի մասնավոր մասնակիցների համար տարընկալման առիթ հանդիսանալ՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մայիսի 31-ի որոշման բողոքարկման ժամկետի հաշվարկի վերաբերյալ: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ անդրադարձ չի կատարվել Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ արձանագրված՝ դատական ակտի վերաքննության կարգով բողոքարկման ենթակա լինելու հանգամանքին, ուստի և քննության չառնելով վերոնշյալը, անհամաչափորեն սահմանափակվել է դիմող Ա.Գևորգյանի՝ դատարանի մատչելիության իրավունքը:

15. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դիմող Ա.Գևորգյանը և ներկայացուցիչ Մ.Վարդանյանն Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ սահմանված բողոքարկման տասնօրյա

[9] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

ժամկետը լրանալուց հետո, Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ տասնօրյա ժամկետի պահպանմամբ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել:

16. Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դիմող Ա.Գևորգյանի և ներկայացուցիչ Մ.Վարդանյանի վերաքննիչ բողոքները ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելիս, Վերաքննիչ դատարանն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի անհարկի սահմանափակումներից խուսափելու նպատակով, պետք է գնահատականի արժանացներ Առաջին ատյանի դատարանի կողմից որոշման եզրափակիչ մասում ոչ իրավաչափորեն արձանագրված՝ կայացված դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա լինելու հանգամանքը:

17. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 30-ի որոշումը՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ դիմող Ա.Գևորգյանի և ներկայացուցիչ Մ.Վարդանյանի վերաքննիչ բողոքներն առանց քննության թողնելու վերաբերյալ, իրավաչափ չէ:

18. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 30-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար[10]:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

---

[10] Տե՛ս, *mutatis mutandis,* Վճռաբեկ դատարանի՝ *Հրայր Հովսեփյանի* գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18 որոշումը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի օգոստոսի 30-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

_____ Ս.ՕՀԱՆՅԱՆ